

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**Ներածություն**

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և երեք անդամները նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով: Հանձնաժողովն ունի հետևյալ կազմը.

Վարդան Մովսեսյան՝	նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝	նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝	հանձնաժողովի անդամ
Ռոբերտ Խարազյան՝	հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝	հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի (թվաքանակը՝ 37) և տեխնիկական սպասարկման անձնակազմի (թվաքանակը՝ 13) միջոցով:

Աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- իրավաբանական - լիցենզիոն բաժին,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի բաժին,
- հասարակության հետ կապերի ծառայություն,
- վարչատնտեսական ծառայություն:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

### ***Սակագնային քաղաքականություն***

Ելնելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ կարգավորվող սակագների ձևավորման սկզբունքներից, հանձնաժողովը 2001 թվականի ընթացքում կատարել է հետևյալ աշխատանքները.

Հիմք ընդունելով ««Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» ՀՀ օրենքը, հաստատվել է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումից հետո նրանց տրվող գործունեության լիցենզիայի ձևը, մշակվել են լիցենզավորված գործունեության պայմանները, սահմանվել է բաշխող ընկերության սակագնային մարժայի հաշվարկման մեթոդաբանությունը:

Հաշվի առնելով 2000 թվականի կանխատեսումների հիմքում ընկած ջրահոսքի մեծության նախագծային գնահատականներից շեղումները, ավելացվել են որոշ փոքր ՀԷԿ -երի արտադրած էլեկտրաէներգիայի ցանց առաքման 2000 թվականի քվոտաները:

Աշխատանքներ են տարվել փոքր ՀԷԿ -երի արտադրած էլեկտրաէներգիայի ցանց առաքման 2001 և 2002թթ. քվոտաների սահմանման ուղղությամբ:

Կատարվել է փոքր ՀԷԿ -երի արտադրված էլեկտրաէներգիայի ցանց առաքման համար սահմանված քվոտաների փաստացի ապահովման կիսամյակային արդյունքների վերլուծություն՝ տարեկան քվոտաներում համապատասխան ճշգրտումներ կատարելու և սակագների վերանայման անհրաժեշտությունը քննարկելու նպատակով:

Սահմանվել են նոր կառուցված 9 փոքր ՀԷԿ -երից առաքվող էլեկտրաէներգիայի սակագները:

Էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև էներգետիկական անվտանգության ապահովման, էներգետիկական անկախության բարձրացման և բնագավառում ներդրումների խրախուսման

նպատակով սահմանվել է մինչև 2005 թվականի հունվարի 1-ը կառուցվող հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի վաճառքի սակագինը՝ 5 ԱՄՆ ցենտ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:

Սահմանվել են 2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանում ջերմամատակարարման ընկերությունների կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման սակագները:

Կատարվել են լիցենզավորված անձանց ներկայացրած հաշվետվությունների և տեղեկատվությունների վերլուծություններ, և դրանց հիման վրա կազմվել են էլեկտրական և ջերմային էներգիայի ու բնական գազի 2002 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները:

Ելնելով «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներից, աշխատանքներ են տարվել ՀՀ էներգետիկայի բնագավառում կարգավորվող սակագների սահմանման (վերանայման) և կիրառման կարգի վերամշակման, ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերի և ցանկի լրամշակման ուղղությամբ:

Ընթացիկ տարում նախատեսվում է ավարտել փոքր ՀԷԿ -երից առաքվող էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկայի լրամշակման աշխատանքները:

Քննարկվել և հաստատվել են «էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ –ի ներկայացրած՝ ջերմային էներգիայի ու ջերմակրի հաշվառքի և «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ –ի ներկայացրած՝ պահուստում գտնվող սարքավորումների և ներկայանային տեխնոլոգիական ենթակառուցվածքների վրա էլեկտրական և ջերմային էներգիաների նորմատիվային ծախսերի հաշվարկման մեթոդիկաները:

Մշակման փուլում է գտնվում լիցենզավորված անձանց կողմից ներկայացված՝ զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրության, ապագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ որոշման ընդունման կարգը:

2001 թվականի մայիսի 1-ից հինգ խոշոր արտադրող և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ -ների համար գործում է էլեկտրաէներգիայի երկդրույք սակագնային համակարգը: Երկդրույք սակագնային համակարգի ներդրումն իրականացվել է էլեկտրաէներգիայի արտադրության համար կատարված

հաստատուն և փոփոխական ծախսերի տարանջատման հիման վրա, որն ապահովում է կայուն հասույթի ստացում, ինչպես նաև նպաստում է սարքավորումների պատրաստականության ապահովմանը:

Երկրորդը սակագնային համակարգի ներդրման նպատակներն են.

- ա) ապահովել հաստատուն ծախսերի (աշխատավարձ, նորոգումներ և այլն) փոխհատուցումը՝ անկախ արտադրվող էներգիայի քանակությունից և ռեժիմներից,
- բ) ապահովել փոփոխական ծախսերի (վառելիք, ջուր, քիմիկատներ և այլն) փոխհատուցումը, որոնք անմիջապես կախված են արտադրվող էներգիայի քանակությունից,
- գ) մեղմացնել սակագների հաշվարկների հիմքում դրվող և փաստացի արտադրված էներգիայի քանակությունների անխուսափելի տարբերության ազդեցությունը արտադրող ընկերությունների կողմից ստացվող շահույթի (վնասի) վրա,
- դ) աստիճանաբար հրաժարվել էներգիայի արտադրության սահմանափակումների (քվոտա) սահմանման վիճահարույց պրակտիկայից,
- ե) բարձրացնել կարգավարական կարգապահությունը:

Հանձնաժողովն առայժմ նպատակահարմար չի համարում փոքր ՀԷԿ-երի համար կիրառել երկրորդը սակագնային համակարգ:

Երկրորդը սակագնային համակարգն առայժմ չի տարածվում նաև բաշխիչ ցանցերի վրա, որոնք շարունակում են մեծածախ գնումներն իրականացնել միադրույք սակա-գներով:

### ***Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն***

Հանձնաժողովում իրականացվել է 2000 թվականի տարեկան և 2001 թվականի առաջին երեք եռամսյակների միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն, որի հիման վրա կատարվել է լիցենզավորված գործունեության արդյունքների, լիցենզավորված ընկերությունների ֆինանսական վիճակի և ֆինանսական վիճակի փոփոխությունների ամփոփում և գնահատում՝ միաժամանակ ստեղծելով կարգավորումն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվական

բազա, որը նպաստում է սակագնային քաղաքականության արդյունավետ իրականացմանը, բնագավառում արդյունավետ քաղաքականության կիրառմանը:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց 2000 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ վերլուծությունը ներառել է էներգետիկայի բնագավառում արտադրության, ներկրման, արտահանման և սպառման ծավալները, գործունեության ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը, շահագործման և վառելիքի տեսակարար ծախսերը, ինչպես նաև աշխատավարձը, պետբյուջեի և սոցիալական ապահովագրության հիմնադրամի մասով պարտավորությունները և այլն:

Վերլուծության արդյունքում գնահատվել են լիցենզավորված անձանց գործունեության արդյունավետությունը, ֆինանսատնտեսական վիճակը և ցուցանիշները, առաջարկվել են առավել հիմնավորված սակագնային քաղաքականության իրականացման և գործունեության լիցենզիաներով լիցենզավորված անձանց առաջադրվող պայմանների վերահսկման մեխանիզմներ:

Կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների հստակեցման և կատարելագործման, ինչպես նաև լիցենզավորված անձանց գործունեության վերահսկման նպատակով աշխատանքներ են տարվում ենթահաշիվների համակարգ ստեղծելու և ներդնելու, այդ համակարգի կիրառման վերաբերյալ հրահանգչական ցուցումներ մշակելու, լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվությունների նոր ձևեր մշակելու և ներդնելու ուղղությամբ: Լիցենզավորված գործունեության վերաբերյալ հաշվետվությունների և տեղեկատվությունների հավաստիության և արժանահավատության ապահովման նպատակով սկսվել և ընթացքի մեջ են հանձնաժողովի կողմից աուդիտի կազմակերպման և իրականացման կարգի մշակման ու ներդրման աշխատանքները:

Մշակվել է էլեկտրաէներգիայի մեծածախ պարտադիր միացյալ շուկայի ներդրման հետ կապված էներգետիկական համակարգի ֆինանսական առողջացման հայեցակարգը և տրվել ֆինանսական ճեղքվածքի ընդհանրացված գնահատականը: Էլեկտրաէներգիայի մեծածախ պարտադիր միացյալ շուկայի ներդրումը ենթադրում է ֆինանսական հոսքերի կարգավորման նոր մոդել, որով ակնկալվում է մեծածախ շուկայի ֆինանսական հոսքերը դարձնել թափանցիկ և վերացնել արտաքին միջամտության հնարավորությունները: Կատարվել է համակարգի

պարտավորությունների գնահատում և դասակարգում, որի արդյունքում ստացվել է համակարգի ֆինանսական ճեղքվածքի ընդհանրացված պատկերը:

2001 թվականի ընթացքում հանձնաժողովը մասնակցել է Հայաստանի Հանրապետությունում էներգիայի, գազի, ջրի համար սպառողների կողմից վճարումների իրականացման միասնական հաշվառման համակարգ ներդնելու նպատակով ՀՀ Նախագահի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին, որի առաջին փուլում արդեն սկսվել է Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի սպառման դիմաց վճարումների հաշվառման միասնական համակարգի ներդրումը:

### ***Լիցենզավորում և իրավական դաշտի կատարելագործում***

2001 թվականի ընթացքում հանձնաժողովը գործուն մասնակցություն է ցուցաբերել «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներին: Հանձնաժողովի կարծիքով իրավական, տեխնիկական և տրամաբանական առումներով օրենքը դարձել է ավելի հիմնավորված, պարզ ու մատչելի: Այն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թվականի մարտի 7-ին, որի արդյունքում հստակեցվել են հանձնաժողովի, պետական իրավասու այլ մարմինների և սպառողների փոխհարա-բերությունները, ներառվել են էներգետիկայի բնագավառում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված նոր դրույթներ (մասնավորապես էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության կանոնակարգման և հետագա զարգացման վերաբերյալ) :

Համապատասխանեցնելով Ազգային ժողովի կողմից ընդունված «Էներգետիկայի մասին» և 2001 թվականի մայիսի 30-ին ընդունված «Լիցենզավորման մասին» ՀՀ նոր օրենքների պահանջներին, հանձնաժողովը մշակել և հաստատել է մի շարք կարգեր ու պայմանագրերի օրինակելի ձևեր, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի վարվեցողության կանոնները», «ՀՀ էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների վերաբերյալ դիմումների ընդունման և քննարկման կարգը», «ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նիստերի նախապատրաստման և անցկացման կարգը», «ՀՀ էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված և

էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման կարգը», երկրորդը սակագնային համակարգում էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրերի, էլեկտրաէներգիայի առուվաճառքի (մեծածախ գնորդ(վաճառող)-բաշխող) պայմանագրի և էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության (մեծածախ գնորդ (վաճառող)-հաղորդող) պայմանագրի օրինակելի ձևերը:

Հանձնաժողովը սերտորեն համագործակցել է նաև պետական այլ մարմինների հետ, մասնավորապես՝ մասնակցել է ՀՀ կառավարությանն առընթեր ջրային պետական կոմիտեի կողմից ներկայացված՝ ՀՀ ջրային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին, ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ քննարկել և լուծել է նախարարության կողմից տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող ջրօգտագործման թույլտվության ժամկետների հետ կապված խնդիրները:

Գրանցվել է լիցենզավորված անձանց միջև կնքված՝ գործունեության 88 պայմանագիր:

Մշակվել են և շուտով կհաստատվեն Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման նոր կարգը և ՀՀ էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման գործունեության լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգը: Վերջինս էականորեն կպարզեցնի էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորման գործընթացը:

2001 թվականի ընթացքում տրվել է գործունեության 31 լիցենզիա, այդ թվում՝

- փոքր ՀԷԿ-երի կառուցման՝ 9
- էլեկտրական էներգիայի արտադրության՝ 5
- ջերմային էներգիայի արտադրության՝ 4
- ջերմային էներգիայի փոխադրման՝ 4
- ջերմային էներգիայի բաշխման՝ 6
- էլեկտրական էներգիայի արտահանման՝ 3

Բացի այդ, երկարաձգվել են 6 լիցենզիայի գործողության ժամկետները:

Լիցենզավորված անձանց կողմից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 1 մլն 750 հազար դրամ պետական տուրք:

### ***Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ***

2001 թվականի ընթացքում «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի պահանջներից ելնելով, լրամշակվել և հաստատվել են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոնները, որոնցում բարձրացվել են սպառողների պաշտպանվածությունը և էներգիա ու բնական գազ մատակարարող ընկերությունների պատասխանատվությունը:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորված սուբյեկտների, ինչպես նաև մատակարարների և սպառողների միջև կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերում մատուցված ծառայությունների, մատակարարված էներգիայի և բնական գազի դիմաց վճարման կարգերը համապատասխանեցվել են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և առաջիկայում ներդրվող էլեկտրաէներգիայի պարտադիր միասնական մեծածախ շուկայի կանոններին:

Անցկացվել է ջերմային էներգիայի արտադրության, բաշխման և փոխադրման գործունեության լիցենզիաներ ստանալու 11 հայտի տեխնիկատնտեսական հիմնավորումների և նախագծերի մոնիթորինգ:

Կատարվել է Երևան քաղաքի ջերմամատակարարման համակարգի ներկա վիճակի և զարգացման հեռանկարների ուսումնասիրություն, որի արդյունքում արվել են գործնական առաջարկություններ այդ համակարգի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ուսումնասիրվել են նաև նախկինում տրված լիցենզիաներով կառուցված (2,5 ՄՎտ գումարային հզորությամբ և 16 մլն կՎտժ էլեկտրաէներգիա տարեկան արտադրանքով) 5 փոքր ՀԷԿ-երի էլեկտրաէներգիա արտադրելու և 6 նոր փոքր ՀԷԿ-երի (18,4 ՄՎտ հզորությամբ և մոտ 76 մլն կՎտժ էլեկտրաէներգիա տարեկան արտադրանքով) կառուցման լիցենզիաներ ստանալու հայտեր, որոնցում տեղ գտած թերությունների վերացման վերաբերյալ հայտատուներին ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

ՀՀ Լուռու մարզպետարանի հետ համատեղ մշակվել է մարզի փոքր հիդրոէներգետիկայի զարգացման ծրագիրը: Ներդրողների տեսանկյունից այն գրավիչ



դարձնելու համար առաջարկվել է՝ ելնելով մարզի ջրառատ գետերի և ջրատարների վրա

փոքր ՀԷԿ-երի կառուցման անհրաժեշտություննից, յուրաքանչյուրի համար կազմել կառուցման և շահագործման անհրաժեշտ փաստաթղթերի հնարավորինս ամբողջական փաթեթ (անհասցե և չանձնավորված) և առաջարկություններ՝ ծրագրի իրականացման նպատակով մրցույթ կազմակերպելու և անցկացնելու համար:

Մշակվել և հաստատվել է «Գազամատակարարման վերականգնման և գազիֆիկացման կարգը», որում հստակեցվել են գազամատակարարող ընկերության գործառույթները: Հաշվի առնելով այդ ընկերության ֆինանսական բարդ կացությունը, սպառողներին սեփական նախաձեռնություն դրսևորելու հնարավորություն է ընձեռվել. աշխատանքների իրականացման համար մասնակիորեն ներգրավվում են նաև նրանց ֆինանսական միջոցները, որոնք հետագայում վերադարձվում են սպառված բնական գազի դիմաց վճարումների համապատասխան նվազեցումներով:

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, քննարկվել և հաստատվել է «110 կՎ և բարձր լարման ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստների հաշվարկման մեթոդիկան»: Ընթացիկ տարում նախատեսվում է մշակել և հաստատել էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց գործունեության իրականացման ընթացքում առաջացող տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, վառելիքի տեսակարար ծախսերի, սեփական և տնտեսական կարիքների համար օգտագործվող էներգիայի, բնական գազի նորմատիվային ծախսերի հաշվարկի մեթոդիկաները: Նշված աշխատանքների իրականացումը հնարավորություն կտա սակագների հաշվարկում հիմք ընդունել ավելի ճշգրիտ և հիմնավորված ելակետային մեծություններ:

***Էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքի բարեփոխումները  
և էլեկտրաէներգիայի պարտադիր մեծածախ միացյալ շուկայի  
ներդրումը***

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջները և Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկայի բնագավառի պահպանման, հետագա կատարելագործման, ընկերությունների գործունեության

արդյունավետության բարձրացման, մասնավորեցման, ներդրումների ներգրավման, հուսալի ու անվտանգ էլեկտրամատակարարման ապահովման, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում մրցակցային շուկայի աստիճանական զարգացման նպատակներով հանձնաժողովը մշակել է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի հայեցակարգը և ներդրման ժամանակացույցը: Արդյունքում հանձնաժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքի բարեփոխման մասին» և «Հայաստանի էլեկտրա-էներգետիկական մեծածախ պարտադիր միասնական շուկայի կառուցվածքը և գործառույթները հաստատելու մասին» որոշումները:

Էլեկտրաէներգետիկական գործող շուկայի կառուցվածքի բարեփոխման նպատակներն են.

- էլեկտրաէներգետիկական բնագավառում գործունեության մեջ ներգրավված տնտեսական սուբյեկտների կոորդինացված և համատեղ աշխատանքի ապահովումը,
- Ոլորտում մրցակցության աստիճանական զարգացումը, ինչը կխթանի էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքի, սպառման ռեժիմների օպտիմալացումն ու ծախսերի կրճատումը, կապահովի էլեկտրաէներգիայի արտադրության տնտեսական արժեքն արտացոլող սակագների ձևավորումը,
- Մրցակցային շուկայի զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների աստիճանական սահմանափակումը,
- Հեռանկարում տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական շուկային ինտեգրման նախադրյալների ստեղծումը:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ միասնական շուկան նախատեսվում է հիմնադրել 2002 թվականի հուլիս ամսից: Նրա խնդիրներն են՝

- շուկայի մասնակիցների գործունեության և, մասնավորապես, առևտրային գործառույթների թափանցիկությունը,
- էլեկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական հոսքերի կառավարման գործում ընկերությունների ինքնուրույնության բարձրացումը,
- էլեկտրաէներգիայի մեծածախ վաճառողների և գնորդների միջև ուղղակի ֆինանսական պատասխանատվության հստակեցումը,

- գնված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց վճարումների կարգապահության ուժեղացումը,
- էներգետիկայի բնագավառի ընկերությունների ֆինանսական կայունությունը, որը նախադրյալներ կստեղծի դրանց մասնավորեցման և ներդրումների ներգրավման համար,
- էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության սահմանված մակարդակի ապահովումը,
- հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության և լիցենզիաների պայմանների արդյունավետ վերահսկողությունը և շուկայի մասնակիցների ու սպառողների շահերի հավասարակշռումը:

Էլեկտրաէներգիայի պարտադիր մեծածախ միասնական շուկան մեծածախ մրցակցային շուկային անցման սկզբնական փուլն է: Շուկայի կառույցների, դրանց գործունեության իրավական դաշտի ձևավորման, էլեկտրաէներգիայի հաշվառման տեխնիկական համակարգի հագեցման, մրցակցության զարգացմանը համընթաց, նախատեսվում է աստիճանական անցում ուղիղ պայմանագրերի և էլեկտրաէներգիայի հաշվեկշռող շուկայի համակարգի ձևավորմանը:

Էլեկտրաէներգիայի պարտադիր մեծածախ միասնական շուկան գործելու է հետևյալ հիմնական սկզբունքներով.

- շուկայի բոլոր մասնակիցները (էլեկտրաէներգիա արտադրող, հաղորդող և բաշխող ընկերություններ) կնքում են միասնական (ընդհանուր) պարտադիր պայմանագիր, որով սահմանվում են շուկայի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները,
- շուկայի մասնակիցների միջև կնքվող միասնական պարտադիր պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ներքին շուկայի կարիքների համար էլեկտրաէներգիայի և հզորության առուվաճառքի միակ պայմանագիրն է,
- էլեկտրաէներգիայի արտահանման, ներմուծման և փոխանակման (զուգահեռ աշխատանքի) պայմանագրերը կնքում է շուկայի մասնակիցների կողմից լիազորված և ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից լիցենզավորված կազմակերպությունը՝ միասնական պայմանագրով և շուկայի այլ կանոններով սահմանված կարգով,

- էլեկտրաէներգիա արտադրող, հաղորդող, բաշխող, ներմուծող և արտահանող ընկերությունները հանձնաժողովի կողմից լիցենզավորված համապատասխան կազմակերպությունների հետ կնքում են շուկային կենտրոնացված ծառայությունների մատուցման պայմանագրեր,
- էլեկտրաէներգիայի մեծածախ պարտադիր շուկայի կառավարումը և պլանավորումը իրականացվում են շուկայի մասնակիցների մասնակցությամբ մշակված և ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված շուկայի կանոններով,
- ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվում է շուկայի կանոններով և պայմանագրով ամրագրված ալգորիթմով ու կարգերով՝ հատուկ բանկի (շուկայի բանկի) միջոցով, առանց որևէ արտաքին միջամտության:

Ներկայումս մշակվում են էլեկտրաէներգիայի պարտադիր մեծածախ շուկայի ներդրման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

### ***Հասարակության և սպառողների հետ տարվող աշխատանքները***

Հանձնաժողովն ապահովում է «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով ամրագրված կարգավորման թափանցիկության սկզբունքը: Հանձնաժողովի որոշումներն ու նորմատիվային ակտերը հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում»:

2001 թվականի ապրիլ ամսին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվել է հանձնաժողովի 2000 թվականի գործունեության հաշվետվությունը, իսկ հոկտեմբեր ամսին ՀՀ Ազգային ժողովում՝ 2002 թվականի գործունեության ծրագիրը:

Հանձնաժողովի նախագահը, անդամները, աշխատակազմի մասնագետները ՋԼՄ-ներով պարբերաբար հասարակությանը իրազեկել են բնագավառի՝ հասարակական հնչողություն ունեցող խնդիրներին և ներկայացրել հանձնաժողովի տեսակետները դրանց վերաբերյալ (մամլո 8 հաղորդագրություն, 17 այլ հրապարակումներ) : Ազգային ռադիոյի «Թեմա պլյուս» ծրագրով, հանրային և մասնավոր հեռուստա-ընկերություններով ունեցած իրենց ելույթներում հանձնաժողովի նախագահը, անդամներն ու աշխատակազմի մասնագետները լուսաբանել են բաշխիչ ցանցերի մասնավորեցման անհրաժեշտության

մանրամասները, խոսել բնական գազի մատակարարման նախկին ծավալների վերականգնման, բնակարանային սեկտորի ջերմամատակարարման ոլորտի հիմնահարցերի, սակագնային քաղաքականության և այլ խնդիրների շուրջ (10 հեռուստառադիոէլույթ), ՋԼՄ-ներով, հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումների ընթացքում անհրաժեշտ պարզաբանումներ են տրվել ինչպես վերոհիշյալ հարցերի, այնպես էլ նոր ընդունված էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (ԷՄՕԿ, ՋՄՕԿ, ԳՄՕԿ) և գազամատակարարման վերականգնման մասին: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմը հանդիպումների ընթացքում սպառողներին ծանոթացրել են իրենց իրավունքներին, «Էներգետիկայի մասին» ՀՀ նոր օրենքի դրույթներին և դրանցից բխող իրավական ակտերին: Կարգավորող մարմինը մեծ նշանակություն է տալիս սպառողների շահերի պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքներին, որի իրականացման ընթացքում սերտորեն համագործակցում է «Սպառողների միություն» հասարակական կազմակերպության հետ:

Սպառողների ահազանգներին, գրավոր բողոքներին, հարցադրումներին տրվել են համապատասխան պարզաբանումներ՝ կապված մատակարարող-սպառող փոխհարաբերությունների հետ: Վիճահարույց հարցերը շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկվել են հանձնաժողովում և ստացել համապատասխան լուծում:

2001 թվականի ընթացքում ստացվել է 136 գրավոր և բանավոր (հեռախոսագանգով) բողոք, որոնցից 120-ը՝ բնակչությունից, 16-ը՝ իրավաբանական անձանցից :

Բողոքների մեծ մասը կապված է եղել էլեկտրաէներգիայի ծախսի հավելագրման, հաշվառքի սարքի տեղադրման, փոխարինման, ստուգման կարգի խախտման, հաշվառքի սարքի տեսանելիության ապահովման և այլ խնդիրների հետ:

Գազամատակարարման բնագավառում բողոքները հիմնականում վերաբերում են գազամատակարարման վերականգնման կարգի խախտմանը:

## **Գործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ**

Հանձնաժողովը, կարևորելով էներգետիկայի բնագավառում կարգավորման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման անհրաժեշտությունը, համագործակցում է միջազգային կազմակերպությունների և մի շարք երկրների կարգավորող հանձնաժողովների հետ:

Հանձնաժողովը 1997 թվականից Կենտրոնական/Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի անդամ-երկրների կարգավորող մարմինների ընկերակցության , իսկ 2000 թվականի դեկտեմբերից՝ հիշյալ տարածաշրջանի երկրների կարգավորող մարմինների կողմից ստեղծված կարգավորող մարմինների տարածաշրջանային ընկերակցության անդամ է: Այդ ընկերակցության շրջանակում գործում են երկու մշտական կոմիտեներ՝ լիցենզիոն և սակագնային, վերջինիս նախագահը Հայաստանի ներկայացուցիչն է: Տարածաշրջանային կարգավորող ընկերակցության գործունեության շրջանակներում 2001 թվականի ընթացքում տեղի են ունեցել սակագնային կոմիտեի երեք նիստ և նախագահության երկու հանդիպում, որոնց, որպես կոմիտեի նախագահ և նախագահության անդամ, մասնակցել է Հայաստանի ներկայացուցիչը:

2001 թվականին սակագնային կոմիտեի աշխատաքների շրջանակներում քննարկվել և մշակվել են տարածաշրջանի երկրների համար մեծ կարևորություն ունեցող՝ էլեկտրաէներգիայի մեծածախ և մանրածախ շուկաներում դիֆերենցված սակագների, համակցված արտադրության էներգակայանքներում էլեկտրական և ջերմային էներգիայի ծախսերի տարանջատման , էներգետիկական ոլորտի կառուցվածքի և մենաշնորհային ծառայությունների սակագների թեմաները:

Վերը նշված և նախորդ տարիներին մշակված 13 թեմաները իրենց կիրառությունն են գտել նաև Հայաստանի Հանրապետության էներգետիկական ոլորտի զարգացման և կարգավորման, ինչպես նաև էներգետիկական շուկայի կանոնների սահմանման գործընթացներում:

2001 թվականի դեկտեմբերին Սոֆիայում տեղի ունեցավ տարածաշրջանային կարգավորող ընկերակցության տարեկան համաժողովը, որի ընթացքում ամփոփվեց 2001 թվականի նրա գործունեությունը և ներկայացվեց 2002 թվականի գործունեության ծրագիրը:

Հաշվետու տարում շարունակվել է հանձնաժողովի համագործակցությունը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ: Հանձնաժողովի մասնագետները 2001 թվականին իրենց որակավորումը բարձրացնելու նպանակով մասնակցել են վերոհիշյալ հանձնաժողովի կազմակերպած սեմինարներին՝ կառավարման աուդիտի, շուկայի ներդրման, սպառողների կրթական մակարդակի բարձրացման, նրանց շահերի պաշտպանության և այլ հարցերի վերաբերյալ:

2001թվականին հանձնաժողովը մասնակցել է USAID, TACIS, UNDP ծրագրերով Հայաստանում իրականացվող նախագծերի քննարկումներին, նոր նախագծերի տեխնիկական առաջադրանքների մշակումներին: Հաշվի առնելով էներգետիկական նոր տեխնոլոգիաների ներդրման բացվող հեռանկարները (հողմային, արևային, տնտեսական և կենցաղային աղբի այման և այլն), հանձնաժողովը աշխատանքներ է տանում արտերկրի գործընկերների հետ՝ ուսումնասիրելու և հաշվի առնելու այդ բնագավառներում գնագոյցման և իրավական դաշտի առանձնահատկությունները:

Կարգավորման բնագավառում եվրոպական երկրների փորձի ուսումնասիրման՝ Հայաստանին ցուցաբերվող տեխնիկական օգնության շրջանակներում կարգավորման ոլորտի խնդիրների ներգրավման նպատակներով մշակվել է TACIS ծրագրի հետ համագործակցության նախագիծ: Համաշխարհային բանկի «Ջերմամատակարարման ռազմավարության մշակում» ծրագրի կառավարման խորհրդի կազմում հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են ինչպես խորհրդի, այնպես էլ աշխատանքային խմբերի և մրցութային հանձնաժողովների աշխատանքներին:

Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են «Հողմաէներգետիկա-2001» համաժողովին և այլընտրանքային էներգետիկային նվիրված երկշաբաթյա ուսուցողական շրջայցին, որոնք կազմակերպվել են ԱՄՆ-ում:

### ***ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվությունը***

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը 2001թ-ին ֆինանսավորվել է ՀՀ պետությունից միջոցներից

N	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջե /հազ.դրամ/	Տարեկան ճշտված բյուջե /հազ.դրամ/	Ֆինանսավորում /հազ.դրամ/	Փաստացի ծախս /հազ.դրամ/
1.	Աշխատավարձ	104436.0	104436.0	104436.0	104436.0
2.	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	12730.9	12730.9	12730.9	12032.2
3.	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	592.0	592.0	401.1	197.1
4.	Գործուղումներ, ծառայողական ուղևորություններ	6600.0	590.0	589.0	589.0
5.	Տրանսպորտի ծառայությունների վճար	2979.6	1609.6	1606.5	2038.3
6.	Կապի ծառայությունների վճար	1587.9	1247.9	1079.0	1320.8
7.	Էլ.էներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր	1650.0	2150.0	2150.0	1998.9
8.	Զրնուղ կոյուղուց օգտվելու վարձ	18.0	18.0	--	--
	Շինությունների և սարքավորումների վարձակալության ծախսեր	5880.0	9520.0	9400.0	11760.0
9.	Ներկայացուցչական ծախսեր	227.5	27.5	22.8	22.8
10.	Այլ ծառայությունների ձեռք - բերման ծախսեր	3000.0	100.0	100.0	100.0
	<b>Ընդամենը</b>	<b>139701.9</b>	<b>133021.9</b>	<b>132515.3</b>	<b>134495.1</b>

2001թ. տարեկան բյուջեից 6680.0 հազ.դրամ հատկացվել է նախորդ տարիների պարտքի արման համար: